

ՀԱԿԻՐԾ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Արարատյան բակալավրիատ» ծրագրի դպրոցների ղեկավար կազմի զարգացման ծրագրի

Արարատյան բակալավրիատը կարևորում է դպրոցների ղեկավար կազմի, մասնավորապես՝ դպրոցի տնօրենի դերը դպրոցների վերափոխման ու կայացման, ուսումնառության և դասավանդման որակի բարձրացման, ինչպես նաև աշակերտների արդյունքների բարելավման գործում: ԱԲ-ի դպրոցի արդյունավետ ղեկավարն իր ուշադրության կենտրոնում պահում է դասավանդման և ուսումնառության բարձր որակը, նախաձեռնում ու կառավարում դպրոցի բարեփոխումները, դպրոցի ներսում ձևավորում բարոյական արժեքներ, ստեղծում անվտանգ ու ապահով միջավայր և համագործակցություն ծավալում տեղական համայնքի, մասնավորապես՝ դպրոցական խորհրդի և ծնողական համայնքի հետ:

Վերոնշյալն ապահովելու համար ԱԲ ծրագրի շրջանակում իրականացվում է ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագիր:

Ծրագիրը մշակում է «Այբ» կրթական հիմնադրամը միջազգային գործընկերոջ՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի (UCL IOE) հետ համագործակցությամբ:



Ծրագրի նպատակն է զարգացնել մասնակիցների գիտելիքները, հմտությունները և ունակությունները վերոնշյալ 5 ոլորտներում, առավել մանրամասն ծանոթացնել նրանց ԱԲ ծրագրի ուսուցման մոտեցումներին ու առանձնահատկություններին՝ դրանով իսկ առավել արդյունավետ դարձնելով ծրագրի ներդրումը դպրոցներում:

Ծրագրի մասնակիցներ

Ծրագիրը նախատեսված է Արարատյան բակալավրիատի դպրոցների տնօրենների և յուրաքանչյուր դպրոցից մեկ փոխտնօրենի համար: Ծրագրի առաջին փուլի մասնակիցների առավելագույն թիվը 55-ն է:

Ծրագրի վերապատրաստողներ

Ծրագրի առաջին փուլի վերապատրաստումները կվարեն Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի ղեկավարների վերապատրաստման գծով մասնագետները: Այս փուլում նախատեսվում է ներգրավել նաև Հայաստանից վերապատրաստողների, ովքեր կօժանդակեն ԼՀՔ-ի մասնագետներին վերապատրաստումների ընթացքում:

Ծրագրի ժամանակացույցն ու ձևաչափը

Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագիրը նոր, միջազգային որակին համապատասխան, **մինչև 1 տարի տևողությամբ** անվճար տեսական և գործնական դասընթացների շարք է:

ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի զարգացման **ծրագրի մեկնարկը** նախատեսված է 2018 թվականի **մայիսի 11-ին**:

Մայիսի 11-13,
2018 թ.

Հոկտեմբերի 5-7,
2018 թ.

Մարտ,
2019 թ.

1-ին
դեմառդեմ
հանդիպում

2-րդ
դեմառդեմ
հանդիպում

3-րդ
դեմառդեմ
հանդիպում

Ի հավելումն դեմառդեմ հանդիպումների՝ զարգացման ծրագրում ներգրավված մասնակիցները ծրագրի ողջ ընթացքում իրականացնելու են ներդրոցական հետազոտություններ և գործնական աշխատանքներ՝ ամրապնդելու ծրագրի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները և լրացնելու ծրագրով նախատեսված թղթապանակը:

Վերապատրաստող թիմը ծրագրի ընթացքում մասնակիցներին նաև տալու է շարունակական ուղղորդում, որն իրականացվելու է ինչպես առցանց, այնպես էլ դպրոցներ անհատական այցերի միջոցով:

Գնահատում

Մասնակիցների գնահատումն իրականացվելու է ղեկավար կազմի՝ բոլոր դեմառդեմ հանդիպումներին մասնակցության ու ծրագրի ավարտին լրացված թղթապանակի առկայության հիման վրա:

Վերոնշյալ պահանջները բավարարելու դեպքում մասնակիցներին շնորհվելու է վկայագիր, որը փաստում է մասնակցի՝ ծրագիրը հաջողությամբ ավարտելու մասին: